



ՕՏԱՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀԱՅՎԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

ԲՈԼ ԷԼՈՒԱՐ ՀԱՅԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Բարիզ հրատարակվող «Արևմուտք» շաբաթաթերթի աշխատակիցներեն Տ. Փոլատյան տեսակցություն ունեցած է Ֆրանսիական Դիմադրական Շարժման ակաճավոր գրող-դարձած է նաև հայ ժողովրդի և անոր գրականության մասին: Ստորև տրվում է տեսակցության հայերուն վերաբերյալ մասը:

— Գաղափար ունի՞ք հայ գրականության մասին:

— Հայ գրականությունը... ի հարկե կը ճանչնամ,— կրսե էլուար:

Ոտքի կեղևն և ինձի ցույց կուտա թարգմանություններ:

Մինչև ևս քիչ մը զարմացած կնայիմ խոշոր հատորներուն, ան կավելցնեմ.—

— Կպաշտեմ արևելյան բանաստեղծությունը, ավելի անկեղծ շեշտ մը ունի ան, Հաֆիզը, Խայամ, ուրիշներ: Հայ երգերը անոնցմե տարբեր գույն մը ունին, քաղցր, լուսավոր... Նահապետ Քուշա կը, ինչ մեծ բանաստեղծ:

Ապշած մտիկ կընեմ ֆրանսացի մեծ բանաստեղծը:

Բայց մեր գրույցին միակ զարմանքը չէ այս:

— Կարդացի՞ք Սարգիսի 70.000 Ասորիները պատմվածքը,— կհարցնե ան:

Գիրքը ունիմ, բայց դեռ չեմ կարդացած, կրսեմ ամչնալով:

— Անպայման կարդացեք,— կթելադրե էլուար,— հիանալի կտոր մըն է ամեն տեսակետներով, չեմ հիշեր թե ատկից գեղեցիկ բան կարդացա՞մ եմ ես: Անգլերեն գրված բայց խորապես հայկական է:

Այս երկրորդ զարմանքս պիտի ըլլար:

Էլուար շարունակեց.

— Հայաստան չեմ գացած, ո՛չ ալ Արևելք, բայց առիթը պիտի չփախցնեմ այցելելու ամբողջ Սովետ Միությունը, ի հարկե Հայաստանն ալ մեջը, ինչպես նաև Սուրիա, Պարսկաստան: Մտիկ ըրեք, ձեզի բան մը պատմեմ, ուր ամեն ինչ կա հայերու մասին. կխորհիմ, թե չեք լսած: Արուեստակից մը պատմեց, Ժան Ռիշար Պլոքը:

«Այս վերջին պատերազմին առաջ,— ըսավ Պլոք,— Մոսկվա կատնվեի, Գրողներու Համաշխարհային Համագումարի՝ Ֆրանսայի կողմն պատգամավոր: Հոն ճանչցա Երվանեն, եկած հայ գրողներ, որոնք զիս ստիպեցին Երևան ալ այցելել: Այնքան պնդեցին, որ չկուցա մերժել:

Գրողի մը համար ամենեն սրտառու է և անոր հպարտությունը, զգլոդ ամեն գեղեցիկ տեսարան մը պիտի ապրեի: Երևանն այցելելի վերջ, օր մը, կնոջս և հայ թարգմանի մը բնկերակցությամբ պտույտ մը ընելու գաղափարը ունեցանք Երևանի շրջակայքը:

Ամառ էր և օդը շատ տաք: Մեր քիչ մը ծերացած ինքնաշարժը կտքար արևուն տակ: Բավական հեռացած էինք բնակություններն: Ու հանկարծ ամայի դաշտի մը մեջ ինքնաշարժին անիվը պայթեցավ: Բավական չարշարվեցանք զայն կարող դնելու համար, բայց իզուր: Համոզված թե պիտի չկրնայինք գլուխ հանել նյդ գործը, սկսանք քննել մեր բոլորովոր, օգնության հույսով մը:

Բացարձակապես միմակ էինք: Հեռուն, հորիզոնին ծայրը, շինքի մը ստվերը կզծվեր միայն, և սկսանք դեպի հոն հառաչանալ մեր ընկերոջ թելադրությամբ: Երբ բավական մոտեցանք շինքին, որ կոխողի ագարակ մը ըլլալու էր, հանդիպեցանք երիտասարդ մշակի մը, որ ծոած՝ հողը կհերկեր: Հայ թարգմանը պարզեց մեր գրությունը, հետո զիս և կինս ներկայացուց անոր:

Երիտասարդը, որ հազիվ 20 տարու ըլլալու էր, առյուծի պես տղա մը, քրտնած ձեռքը ձեռքիս մեջ ըսավ.

— Ես ձեզ կճանչնամ, պ—րն Պլոք, ձեր նկարը տեսած եմ թերթերուն մեջ: Դուք չէի՞ք, որ

Գրողներու համագումարին այսինչ նյութի մասին ելույթ մը ունեցաք: Կարդացինք ձեր ճառը:

Են մեյ մը կնոջս կնայեի, մեյ մը հայ թարգմանին, ապշած, ուրախութենեա այնքան հուզված, որ չեք կրնար երեակայել:

— Կա՛մ էր ձեր ճառը, — կշարունակեի հայ գյուղացի տղան, — բայց հոն կետեր կային, որոնք չէին համապատասխանէր մեր տեսակետներուն:

Ան վերեն վար քննեց ճառս, մատնանշեց իր սխալ գտած մասերը: Եվ ամենեն զարմանալին, ամենեն հիանալին, ա՛ն, այդ հայ գյուղացին իրավունք ուներ, ավելի լավ կըմբռնեի հարցերը:

Երբեք պիտի չմոռնամ այս դեպքը, — կըսեի Պլոք, մեզի ուղեկով իր խոսքը, —

Ֆրանսայի մեկ անկյունին մեջ ապրող գյուղացին գիտե՞աւոյ՞ միայն ձեզմե ամենե մեծին առեւեր, — վերջացուց ան:

— Կներեք, — ըսավ էլուար, ոտքի ելնելով և այս պատմությունը վերջացնելով, — կներեք, ժամադրության մը պիտի հասնիմ:

— Հապա դիմադրական գրականության մասին իմ հարցո՞ւմս:

— Հարկ չկա, — ըսավ ան, ձեռքը ինծի երկարելով, — հայերուն պետք չունիմ այդ մասին խոսելու, դուք ավելի լավ գիտեք, գացեք հարցուցեք ձեր գրագետներուն, գացեք հարցուցեք այն անմահ տղոց, որոնք հոս ևս, Ֆրանսայի մեջ, ցույց տվին թե ի՞նչ է Դիմադրությունը, Ազատության համար հեղոսական պայքարը:

(«Ժողովուրդի ձայն» քիվ 1293, 1947 թ.)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՄԸ

Լոնտոնի մեջ լույս տեսած է անգլերեն լեզվով գրքույկ մը՝ «Տոլաբի կայսերապաշտության սահմանագլուխը — Սովիեթական Հայաստանի պատմությունը» խորագրով, հրատարակություն Բրիտանա-սովիետական Հնկերության: Գրքույկին հեղինակն է Վեր. Սթենլի Իվլինս:

Հեղինակը ամփոփ կերպով կներկայացնե Հայաստանի պատմությունը, ապա կծանրանա Սովետական Հայաստանի վերելքին վրա և կշեշտե հայկական պահանջներու իրավացի հանգամանքը: Հայրենադարձի առընչությամբ ան կհաստատե թե ներգաղթել փախաբող բոլոր օտարաբնակ

հայերը ընդունելու համար անդ է Հայաստանի ներկա հողամասը և թե անհրաժեշտ է, որ անոր կցվին իր պատմական հողերեն բռնագրավված մասեր, որպեսզի գաղութներու բոլոր հայերը կարենան ներգաղթել: Հեղինակը կհիշե, թե Հայաստանի պատմական լեռը՝ Արարատ, որ Երևանին քառասուն մղոն միայն հեռու է, կգտնվի թրքական իշխանության տակ և կեղբարիակե ըսելով. «Երբ հայերը կարենան ազատորեն քալել այդ պատմական լեռան հողին վրա, այն ատեն անոնք պիտի զգան թե բազմաթիվ դարերի ետք արդարություն կատարված է իրենց համարը:

(«Նոր օր» 10 հոկտ. 1947 թ.)

